ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՊԳԿՎ-2016-ԲԸԱՀ-7

ք.Երևան « 09 » դեկտեմբերի 2016 թվական

Սույն պայմանագիրը կնքված է.

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղը (պետական գրանցման վկայական N 01 Բ 002122, տրված 03.03.2008թ. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից, պետական գրանցման համարը՝ 211.060.04648, իրավաբանական հասցեն՝ՀՀ, ք. Երևան, Նիկոլ Դուման 22 հասցեում) ի դեմս՝ տնօրեն Հարութ Ներսեսյանի (անձնագիր՝ AH0611920, տրված 27.07.2010թ., 002-ի կողմից, հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հր.Քոչար 14 շենք, բն. 47), (այսուհետ՝ Վաճառող), որը գործում է կանոնադրության հիման վրա, և որի անունից համաձայն 05.12.2016թ. տրված լիազորագրի հանդես է գալիս լիազորված անձ՝ Վարդան Սարգսի Միքայելյանը, (նույնականացման քարտ 003173135, տրված 28.03.2014թ., 069-ի կողմից, հաշվառված ք.Երևան, Բաբաջանյան 30 շենք, բն.27) մի կողմից և **Հայաստանի Հանրապետության, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության** (ք.Երևան, Տիգրան Մեծի պողոտա 4), (այսուհետ՝ Գնորդ) ի դեմս վարչության աշխատակազմի ղեկավար՝ Վահագն Ֆելիքսի Հարությունյանի, որը գործում է վարչության կանոնադրության հիման վրա, և որի անունից համաձայն 07.12.2016թ. լիազորագրի հանդես է գալիս լիազորված անձ՝ Դիանա Լենորի Գրիգորյանը (անձնագիր՝ AK0573998, տրված՝ 26.07.2010թ., 004-ի կողմից, հասցե.՝ ք.Երևան, Փափազյան 13 շենք. բն.57), մյուս կողմից, միջև:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն պայմանագիրը կնքված է հիմք ընդունելով.

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը,
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. նոյեմբերի 18-ի N 1166-Ն որոշումը:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1 Սույն պայմանագրի գնման առարկա է հանդիսանում Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղին սեփականության իրավունքով պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ քաղաքի Չարենցի փողոց 13 շենք հասցեում գտնվող 1150.9 քառ. մետր մակերեսով անշարժ գույքը (նախկին մանկապարտեզ՝ 1122.73 քառ. մետր, պարիսպ՝ 28.17 քառ. մետր) և դրա օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.318 հեկտար մակերեսով հողամասը (այսուհետ՝ Անշարժ գույք):

2.2 Անշարժ գույքը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի կողմից 27.06.2016թ.-ին տրված N 27062016-08-0018 վկայականի հիման վրա սեփականության իրավունքով պատկանում է Վաճառողին:

2.3 Սույն պայմանագիրը կնքելու պահին անշարժ գույքը գրավ դրված չէ, արգելանքի տակ չի գտնվում համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանման կողմից 05.12.2016թ. տրված N US-05122016-08-0093 անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքի:

2.4 Անշարժ գույքի գտնվելու վայրն է՝ ՀՀ, մարզ Շիրակ, համայնք Արթիկ ք., Չարենցի փողոց 13 շենք (թիվ 8-րդ մսուր-մանկապարտեզ):

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Վաճառողը իրավունք ունի՝

3.1.1 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրեն վճարման ենթակա գումարները.

3.2 Վաճառողը պարտավոր է՝

3.2.1 Գնորդին հանձնել Անշարժ գույքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.2.2 ապահովել սույն պայմանագրի նոտարական ձևակերպման հետ կապված ծախսերը:

3.3 Գնորդն իրավունք ունի՝

3.3.1 տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իր կողմից ձեռք բերված Անշարժ գույքը ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3.4 Գնորդը պարտավոր է՝

3.4.1 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տույժը:

3.4.2 ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել Անշարժ գույքի հանդեպ սեփականության իրավունքի պետական գրանցումը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված կարգով:

3.4.3 Իր միջոցների հաշվին վճարել Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ, ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.1. Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **17500000 (տասնյոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն):**

4.2 Գնորդը պարտավորվում է Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի 1930049677440100 հաշվին վճարել Անշարժ գույքի վաճառքի գինը՝ 17500000 (տասնյոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, ոչ ուշ քան մինչև 2016թվականի դեկտեմբերի 25-ը: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է Վաճառողի կողմից դուրս գրված հարկային հաշվի (հաշիվ-ապրանքագրի) և հանձման-ընդունման արձանագրության (Հավելված 1) հիման վրա:

5.ԳՈՒՅՔԻ ՀԱՆԴԵՊ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5.1 Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է Գնորդին սույն պայմանագրից ծագող իրավունքը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով պետական լիազորված մարմնում գրանցելու պահից:

6. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ

6.1. Վաճառողը պարտավոր է սույն պայմանագրի կնքումից հետո հնգօրյա ժամկետում Անշարժ գույքը հանձնել Գնորդին, Անշարժ գույքի հանձնման-ընդունման ակտի ստորագրման ճանապարհով:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողի կողմից սույն պայմանագրի 2.1 կետում նշված Անշարժ գույքը չհանձնելու դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Անշարժ գույքի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրի 6.1 կետով նախատեսված Անշարժ գույքի հանձնման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ Անշարժ գույքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.1 և 7.2 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Գնորդի կողմից Պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.5 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

8.1 Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում նոտարական վավերացման պահից, կնքված է համարվում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

9.2 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման

հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.4. Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

9.5. Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1 Սույն պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:

10.2. Սույն պայմանագրի՝ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ քաղաքի Չարենցի փողոց 13 շենք (թիվ 8-րդ մսուր-մանկապարտեզ) հասցեում գտնվող 1150.9 քառ. մետր մակերեսով անշարժ գույքը (նախկին մանկապարտեզ՝ 1122.73 քառ. մետր, պարիսպ՝ 28.17 քառ. մետր) և դրա օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.318 հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է դրա պետական գրանցման պահից:

10.3 Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումներն օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր, ստորագրված են Կողմերի կողմից, վավերացված են նոտարի կողմից և գրանցված են անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:

10.4 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են 7 էջից, կնքվում է 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ, մեկ օրինակը պահվում է նոտարական գործում, իսկ մյուս օրինակը տրվում է ներկայացնելու ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում՝ գրանցելու համար: Պայմանագրի օրինակների միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ պահվող օրինակին:
10.5 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

Գնորդ	Վաճառող
ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն ք. Երևան, Տիգրան Մեծի 4 ՀՀ ՖՆ աշխ. գործառ. Վարչություն Հ/Հ 900011010759 ՀՎՀՀ 02528489	Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ Իրավ.հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Նիկոլ Դուման 22 Գործ. հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Մ.Բաղրամյան 18 «Կոնվերսբանկ» ՓԲԸ Հ/Հ 1930049677440100 ՀՎՀՀ 00032803
Աշխատակազմի ղեկավար՝ Վահագն Հարությունյան	Տնօրեն՝ Հարութ Ներսեսյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆՎԵՑ ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ԻՆՆԻՆ

սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոն նոտարական տարածքի նոտար՝ ԷԼՄԻՐԱ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՍ կողմից:

Կողմերը սույն պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ:

Պայմանագիրը ստորագրած ֆիզիկական անձանց ինքնությունը, գործունակությունը, իրավաբանական անձի իրավունակությունը և նրա ներկայացուցչի լիազորությունները, ինչպես նաև անշարժ գույքի սեփականության իրավունքը ստուգված և պարզված է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 563 հոդվածին համապատասխան, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում 30/երեսուն/ աշխատանքային օրյա ժամկետում:

11769

Գրանցված է սեղանամատյանում՝ ---------- ով
Գանձված է պետ. տուրք և ծառայության վճար համաձայն
ՀՀ "Պետ.տուրքի մասին" և "Նոտարիատի մասին" օրենքների

Նոտար՝ ----------

Հավելված 1
«09» դեկտեմբերի 2016 թ. կնքված
N «ՊԳԿՎ-2016-ԲԸԱՀ-7» ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ Իրավ.հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Նիկոլ Դուման 22 Գործ. հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Մ.Բաղրամյան 18 «Կոնվերսբանկ» ՓԲԸ Հ/Հ 1930049677440100 ՀՎՀՀ 00032803	ՀՀ ԿԱ ՊԳԿ վարչություն ք. Երևան, Տիգրան Մեծի 4 ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն Հ/Հ 900011010759 ՀՎՀՀ 02528489

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 2016 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **«Անշարժ գույքի առուվաճառքի» պայմանագիր**
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « »« » 2016 թ.
Պայմանագրի համարը՝ *«ՊԳԿՎ-2016-ԲԸԱՀ-7»*
Պատվիրատուն՝ ի դեմս Վարչության պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի պետ. Գ.Սարգսյանի և Պայմանագրի կողմը՝ ի դեմս Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ Հ. Ներսեսյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « »« » 2016 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունը՝

N	Մատուցված ծառայության							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____ ստորագրություն	_____ ստորագրություն
_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1.1
«09» դեկտեմբերի 2016 թ. կնքված
N «ՊԳԿՎ-2016-ԲՀԱՀ-7» ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությունը (այսուհետ՝ Պատվիրատու) և Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Հ. Ներսեսյանի (այսուհետ՝ Կատարող) միջև 2016թ. -ին կնքված N *«ՊԳԿՎ-2016-ԲՀԱՀ-7»* գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2016թ. ---------- ---------- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	Ընդունեց հայտը նախագծած ներկայացուցիչ՝
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
ստորագրություն	ստորագրություն